ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Թադէոս վարդապետի անունով, որով վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, 18 ապրիլի, թ. 632։

Կոնդակ Սեւանի միաբան Տ. Եղիշէ վարդապետի անունով, որով վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 20 ապրիլի, թ. 651։

Կոնդակ Մայր Աթոռի տպարանի վարչութեան անդամ Տ. Վարդան վարդապետի անունով, որով ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհուեց, 25 ապրիլի, թ. 688։

Կոնդակ Նոր-Ջուղայի Եռայի քահանայ Յովհաննիսեանի անունով, որով աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց, 25 ապրիլի, թ. 691։

Կոնդակ Նոր-Ջուղայի Գարեգին քահանայ Կիրակոսեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց։ 25 ապրիլի, թ. 692։

Կոնդակ Նոր-Ջուղայի Կարապետ քահանայ Թումիկեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, 25 ապրիլի, թ. 693։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ քննութեան առնելով Ղարաբաղի Կոնսիստորիայի գրամարկղից հինգ հազար չորս հարիւր ութսուն վեց ռուբլի 35 կոպէկ պակասելու գործը՝ գտաւ, որ ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է Կոնսիստորիայի գանձապահ Յարութիւն աւագ քահանայ Վարդապետեանի վրայ՝ որոնց. պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային պահանջել Յարութիւն աւագ քահանայ Վարդապետեանից պակասող հինգ հազար չորս հարիւր ութսուն և վեց ռուբլի

35 կոպէկ գումարը, երեք ամսուայ ընթացքում, հրամանը ստանալու օրից։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի ապրիլի 11-ի թ. 590 կոնդակը Սինոդի անդամներ Տ. Տիրայր ծ. վարդապետին և Գէորգ վարդապետին, Հոգևոր Ճեմարանի Տեսուչ Տ. Գարեգին ծ. վարդապետին, Տ. Զաւէն վարդապետին և Ղարաբաղի Հ. թեմի կառավարիչ Տ. Վահան ծ. վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելու մասին՝ որոշց. Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակի համաձայն երդուեցնել յիշեալ վարդապետներին Մ. Տաճարի Միածնի Իջման ս. Սեղանի առաջ ապրիլի 15-ին Տ. Արիստակէս վարդապետ ձեռքով և երդմնագիրը մատուցանել Նորին Սրբութեան, ապրիլ 16-ին, կիրակէ օրը նրանց եպիսկոպոս ձեռնադրելու։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի ապրիլի 7-ի թ. 558 մակագրութիւնը, Ատրպատականի առաջնորդին դպրոցական ֆոնդի տոկոսներից իւր 1916 թ., թ. 615 մակագրութեամբ որոշած մի հազար ռուբլի նպաստը նոյն թեմի չքաւոր դպրոցներին տալու մասին, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալ Ատրպատականի առաջնորդին դպրոցական ֆոնդի տոկոսներից թեմի չքաւոր դպրոցներին նպաստ մի հազար ռուբլի։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի ապրիլի 7-ի թ. 557 մակագրութիւնը, որով պատուիրում է յանձնել Ատրպատականի առաջնորդին յունուարի 25-ի 1թ. 57 մակագրութեամբ Սինոդ յանձնած 1478 ռուբլուց՝ 1400 ռուբ. որպէսի գումարը ստացուած է Հ. Առաքելեանից յօգուտ Սալմաստի գաղթականների՝ որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին յանձնել Ատրպատականի առաջնորդին Հ. Առաքելեանի փոխադրած (1478 ռուբլի՝) մի հազար չորս հարիւր ռուբլի։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի ապրիլի 13-ի թ. 640 մակագրութիւնը Եղբ. Օգն. Յանձնաժողովին Նորին Սրբութեան տրամադրութեան տակ գտնուած գումարներից

40000 ռ. տալու մասին՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին տալ Ս. Էջմ. Եղբ. Օգն. Յանձն. յիշեալ գումարը։

Սինոդը՝ լսելով Նորին Վեհափառութեան ապրիլի 13-ի թ. 639 մակագրութիւնը՝ Ս. Էջմ. Եղբ. Օգն. Յանձնաժողովին Նորին Սրբութեան տրամադրութեան տակ գտնուող գումարներից փոխարինաբար 200,000 ռուբլի տալու մասին, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալու Ս. Էջմիածնի Եղբ. Օգն. Յանձն. Նորին Սրբութեան տրամադրութեան տակ գտնուած գաղթականական գումարներից երկու հարիւր հազար ռուբլի՝ գաղթականներին նպաստ տալու համար։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հայոց Առաջնորդի այս տարուայ փետրուարի 8-ի թ. 213 յայտարարութիւնը, որով նա խնդրում է յայտնել, թէ պատերը լուծուած ամուսինների նկատմամբ չկան որոշ հրահանգներ նրանց իրաւական տեղի ազգակցական յարաբերութեան մասին, որոշեց. բացատրել Վրաստանի Կոնսիստորիային, թէ նախ՝ պատերը լուծուած ազգականների մասին պէտք է առաջնորդուել Սինոդի 1915 թ. մարտի 10-ի № 751 շրջաբերականով, որով բացատրած է, թէ պատերը լուծուած կինը կարող է կրել իւր նախկին ամուսնու ազգանունը մինչև իւր երկրորդ պատերը, որից յետոյ նա կրելու է իւր երկրորդ ամուսնու ազգանունը. երկրորդ՝ պատերը լուծուած ամուսնու նոր պատերի դէպքում այդ պատերը նորա համար երկրորդ պէտք է ճանաչել, և երրորդ՝ պատերը լուծուած ամուսինների և նոցա ազգականների իրաւական տեղի և ազգակցութեան փոխադարձ յարաբերութեան՝ որպէս գուտ կրօնական խնդրի մասին՝ խնդրել Նորին Սրբութեան տնօրէնութիւնը, որի համեմատ և տալ Կոնսիստորիաներին շրջաբերական հրահանգ։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ մարտի 29-ի թ. 524 մակագրութիւնը, որով պատուիրում է տալ դպրոցական ֆոնդի տոկոսներից, իբրև միանուագ

նպաստ, Ախալցխայի շրջանի Մեծ և Փոքր Պամաճ, Սազել, Ղուլալիս, Օրալ և Ծակ գիւղերի կենդրոնական դպրոց կառուցանող Յանձնաժողովին 300 ռուբլի՝ ՈՐՈՇԵՑ. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին ուղարկել, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջոցով, վերոյիշեալ Յանձնաժողովին իբրև միանուագ նպաստ 300 ռ. շինութեան համար։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ ապրիլի 7-ի Թ. 553 մակագրութիւնը, որով պատուիրուած է վարկ բանալ Ս. Էջմ. Եղբ. Օգն. Յանձ. անունով գաղթականական գումարներից 20,000 ռուբլի աշխատանքի տան սկզբնական ծախքերը հոգալու համար՝ ՈՐՈՇԵՑ. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին գաղթականական գումարներից 20,000 ռուբլի վարկ բանալ՝ աշխատանքի տան ծախքերի համար։ 14 ապրիլի, Թ. 121։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ ապրիլի 7-ի Թ. 552 մակագրութիւնը գաղթականական գումարից Ս. Էջմ. Եղբ. Օգն. Յանձն. 12000 ռուբլի փոխարինաբար տալու մասին՝ ՈՐՈՇԵՑ. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալ փոխարինաբար 12000 ռ.։ 14 ապրիլի, Թ. 122։

Սինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի անցած տարուայ մարտի 10-ի Թ. 686 յայտարարութիւնը Նոր Բայազէտի գաւառի Ներքին Գեօզալդարա գիւղի բնակիչ Արսէն Տէր Մխիթարեանին որոշեց քահանայ ձեռնադրելու մասին յանձնարարել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ նոյն գիւղի համար 19 ապրիլի, Թ. 123։

Սինօդը՝ լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան անցած մարտի 20-ի Թ. 79 յայտարարութիւնը և ի նկատի առնելով, որ Սինօդը Վաղարշապատի հրապարակը և շուկայի ներսի բակը պէտք է վերածել պարտէզի և զբօսավայրի, վերացնելով այրուած խանութների շարքը և շինել նոր խանութներ խճուղու ուղղութեամբ և դէպի հարաւ, մինչև նոր վեհարանի սահմանը՝ ՈՐՈՇԵՑ. պատուիրել Վանական Կառավարութեան թոյլ տալ՝ արտաքոյ շու-

կայի նախկին խանութպաններին նորոգել ժամանակաւորապէս այրուած խանութները, ով որը կամենայ, հոգայ ծախքը և նիւթերէնը իրենց հաշուին այն պայմանով, որ նորոգելու օրից մինչև ներկայ տարուայ վերջը օգտուին նաքա խանութներից ձրի, իսկ այնուհետև, 1918 թ. յունուարի 1 ից, մինչև այդ խանութների վերացնելը, համեմատ Սինոդի վերոգրեալ որոշման այդ՝ նորոգուած խանութները կարող են տրուել ցանկացողներին՝ որոշ վարձով Սինոդի համաձայնութեամբ։ 19 ապրիլի, թ. 124։

Սինոդը՝ լսելով Մայր Աթոռի կալուածների կառավարիչ Լևոն Տ. Աւետիքեանի այս տարուայ փետրուարի 23-ի, թ. 22 յայտարարութիւնը, որով խնդրում է հաստատել իր ներկայացրուած ցուցակը Զարեքայ վանքի անտառից փայտ կտրելու մասին՝ ուռեց. հաստատել կալուածների կառավարչի ներկայացրած ցուցակը՝ թոյլ տալ նորան վաճառել Զարեքայ անտառից, համաձայն այդ ցուցակի 1917 թ. ընթացքում ծառեր, եթէ հնարաւոր կլինի աւելի գնով, քան նշանակուած է ցուցակում։ 21 ապրիլի, թ. 126։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1916 թ. դեկտեմբերի 21-ի թ.6179 յայտարարութիւնը, Բորչալուի գաւառի Գիւլագարակ գիւղի բնակիչ Մարտիրոս Տէր Սարգսեանին նոյն գաւառի Աքորի գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին՝ ուռեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Մարտիրոս Տէր Սարգսեանին և յանձնարարել թեմի Առաջնորդին ձեռնադրել նորան քահանայ Աքորի գիւղի համար։ 21 ապրիլի, թ. 127։

Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցած տարուայ նոյեմբերի 18-ի թ. 5862 յայտարարութիւնը Ագէքանդրապոլի գաւառի Փոքր Քէյթի գիւղի բնակիչ Հաջիբաշ Կիրակոսեանին քահանայ ձեռնադրելու մասին՝ ուռեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Հաջիբաշ Կիրակոսեանին և յանձնարարել փոխթեմակալին ձեռնադրել նորան քահանայ Փոքր Քէյթի գիւղի համար։ 21 ապրիլի, թ. 128։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 5-ի թ. 544 կոնդակը Երնջակի վանքի միաբան Ղևոնդ աբեղայ Դաւթեանին Արիմի Ս. Խաչ վանքի վանահայր նշանակելու մասին՝ որոշեց. նաև պատուիրել Ղևոնդ աբեղայ Դաւթեանին շուտով մեկնել իւր նոր պաշտօնատեղին, ստանալ Ս. Խաչ վանքի գոյքը և կալուածները և, մնալով պաշտօնի մէջ՝ աշխարհական հսկողութիւն ունենալ կալուածների վերայ և երկրորդ՝ պատուիրել Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային կարգադրել յանձնել Ս. Խաչ վանքի գոյքը և կալուածները վանահայր Ղևոնդ աբեղային։ 24 ապրիլի, թ. 131։

Սինոդը՝ լսելով Ադգիս Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 18-ի թ. 629 կոնդակը Սևանի վանքի միաբան Տ. Արիստակէս վարդապետ Զուլոյեանին Մայր Աթոռի միաբան ճանաչելու մասին՝ որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեան համաձայն Սևանի վանքի նախկին միաբան Արիստակէս վարդապետ Զուլոյեանին ճանաչել Մ. Աթոռի միաբան։ 24 ապրիլի, թ. 133։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 28-ի թ. 724 մակագրութիւնը Ս. Էջմ. Եղբ. Օգն. Ցանձն. անունով 30000 ռուբլի վարկ բանալու մասին՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին 30000 ռ. վարկ բանալ Ցանձնաժողովի անունով գաղթականական գումարից՝ ուղարկելու Մուսուլի և Բաղդատի շրջանների գաղթականների կարիքների համար։ 28 ապրիլի, թ. 134։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 17-ի թ. 1365 յայտարարութիւնը, Էջմիածնի գաւառի, Մարգարա գիւղի բնակիչ Յովսէփ Մարգարեանցին տարկաւագ ձեռնադրելու մասին՝ որոշեց. ընդունել Յովսէփ Մարգարեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան առ այժմ տարկաւագ նոյն գիւղի ս. Ղևոնդ եկեղեցու համար։ 1 մայիսի, թ. 136։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 28-ի թ. 725 մակագրութիւնը, որով պատուիրում

է գոհացնել Ճեմարանի Տեսչի միջնորդութիւնը Ճեմարանի ուսուցչական խմբի բոլոր անդամների տուած ռոճիկների վերայ եւ անխտիր քառասուն տոկոս աւելացնելու մասին՝ որոշեց. *պատուիրել Մայր Աթոռի գանձապահին բանալ Մայր Աթոռի Ճեմարանի տեսչի անունով յաւելեալ վարկ տասն երկու հազար հարիւր եօթանասուն երկու ռուբլու՝ Ճեմարանի ուսուցչական խմբին ռոճիկների քառասուն տոկոս յաւելում տալու համար, ներկայ ուսումնական տարւայ ընթացքում։ 1 մայիսի, թ. 138։*

Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարւայ ապրիլի 7-ի թ. 551 մակագրութիւնը, հանգուցեալ Աղէքսանդր Տարասեանի յօգուտ ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանին կտակած 64000 ռուբլու անուանական արժէթղթերի գործադրութեան մասին՝ որոշեց. *հանգուցեալ Աղէքսանդր Տարասեանի կտակած և նրա կտակարարների ներկայացրած 64000 ռուբլուց նախ՝ 50,000 ռ. արժէթղթերը պահել առանձին և անձեռնմխելի ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անունով, գործադրելով տոկոսները կտակակատարների որոշման համաձայն երկրորդ՝ առանձին և անձեռնմխելի պահել 14000 ռուբլու արժէթղթերը, որի $^{0}/_{0}{}^{0}/_{0}$-ի գործադրութեան մասին համաձայն կտակակատարների որոշման առանձին կարգադրութիւն անել, և երրորդ՝ կտակի շրջանային դատարանի վճռի և կտակակատարների 1917 թ. մարտի 3-ին Վեհափառ Կաթուղիկոսի անունով ներկայացրած խնդրի վաւերական պատճէնները ներկայացնել Նորին Սրբութեան Դիւանին ի պահ յանձնելու համար։ 3 մայիսի, թ. 139։*

Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարւայ մայիսի 2-ի թ. 772 մակագրութիւնը Արսէն վարդապետ Ղլտճեանին մի տարով արձակուրդ, միաբանական ռոճիկ և մնդադրամ տալու մասին՝ որոշեց. *պատուիրել Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդին կարգադրել տալ Սանահնի վանքի միաբան Արսէն վարդապետ Ղլտճեանին Սանահնի վանքի արդիւնքից մի տարւայ միաբանական ռոճիկ։ 3 մայիսի, թ. 147։*

Սինոդը լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի 1916 թ. դեկտեմբ. 26-ի թ. 4591 յայտարարութիւնը Նոր Նախիջևան քաղաքի բնակիչ Յարութիւն Յարութիւնեանին նուխու գաւառի Վարդաշէն գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Յարութիւն Յարութիւնեանին և յանձնարարել թեմի կառավարչին ձեռնադրել նրան քահանայ Վարդաշէն գիւղի համար։ 8 մայիսի, թ. 147։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ փետրուարի 18-ի թ. 900 յայտարարութիւնը Մայր Աթոռի «Գետարգել» անուանեալ կալուածքը վարձով տալու մասին՝ որոշեց. հաստատել «Գետարգել» կալուածքի աճրդախօսութիւնն Առինջ գիւղացիների վերայ տարեկան երեք հազար ռուբլով։ 8 մայիսի, թ. 149։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 7-ի թ. 1366 յայտարարութիւնը Քանաքեռ գիւղի բնակիչ Սաղաթէլ Վարդանեանին ստիկաւագ ձեռնադրելու մասին՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Սաղաթէլ Վարդանեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան ստիկաւագ Քանաքեռ գիւղի ս. Յակոբ եկեղեցու համար։ 10 մայիսի, թ. 150։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ մայիսի 5-ի թ. 791 մակագրութիւնը, որով յանձնում է Մ. Աթոռի էջմիածնի կալուածների կառավարիչ Յովհաննէս Խոջաէյնաթեանի թ. 21 յայտարարութիւնը՝ պատուիրում է քննել և վերջ տալ նոյն կառավարչի և Վանական կառավարութեան մէջ ծագած տարաձայնութիւններին՝ որոշեց. համաձայն կառավարչի խնդրի արձակել նորան Մ. Աթոռի կալուածների կառավարչի պաշտօնից, տալով նրան ռոճիկ մինչև այս տարուայ յունիսի վերջը, պատուիրելով Վանական կառավարութեան ստանալ նորանից կալուածները, անասունները, գոյքը և հաշիւները և խնդրել

Նորին Սրբութեան նշանակել ատարակի համար կառավարիչ։ 10 մայիսի, թ. 153։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 7-ի թ. 559 մակագրութիւնը, որով պատուիրում է շարունակել տալ Ատրպատականի Առաջնորդ գերապատիւ Ներսէս եպիսկոպոսին այս տարուայ յունուարի մէկից Նորին Սրբութեան որոշած ամսական 125 ռ. ռոճիկը՝ որոնց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին շարունակել տալ ամսական 125 ռ. ռոճիկ այս տարուայ յունուարի մէկից, մինչև առանձին տնօրէնութիւն։ 12 մայիսի, թ. 155։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլի 19-ի թ. 637 մակագրութիւնը, Կովկասի կոյրերի օգտին հայոց եկեղեցիներում գանձանակ շրջեցնելու մասին՝ որոնց. պատուիրել կոնսիստորիաներին կարգադրել գանձանակ շրջեցնել եկեղեցիներում կոյրերի օգտին Վարդավառի կիւրակէ ս. պատարագի ժամանակ և գոյացած դրամը փոխադրել կոյրերի ինամատարութեան խորհրդին։ 12 մայիսի, թ. 156։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 14-ի թ. 1650 յայտարարութիւնը, որով խնդրում է հրահանգ այլազգաւան անձանց առանց Հայ եկեղեցու գիրկն ընդունելու նոյն եկեղեցում պսակուելու մասին՝ որոնց. այդ խնդիրը ճանաչելով իբրև զուտ կրօնական ներկայացնել Վեհափառ Կաթուղիկոսին ի բարեհաճ տնօրէնութիւն, յարակցելով, թէ Սինոդի կարծիքով, որովհետև այլազգաւան անձն չէ ընդունում Մեր եկեղեցու խորհուրդները, նոցա թեում և պսակը, ուստի և պէտք է բացատրել Կոնսիստորիային, թէ այլազգաւան քրիստոնեաներին թոյլատրելի չէ պսակել մեր եկեղեցու ծիսով։ 12 մայիսի, թ. 157։

Սինոդը լսելով Պետրոսկի քաղաքից հրէուհի Եսթեր Աւաժանակու մայիսի 8 ի հեռագիրը, որով նա խնդրում է բաւարարել իւր խնդիրը իրեն Հայաստանեայց եկեղեցու ծիսով մկրտելու մասին՝ որոնց. պատուիրել Ատրպատականի

Կոնսիստորիային կարգադրել մկրտել Պետրովսկ քաղաքի վերաբնակիչ հրէուհի Եսթեր Աւաժանակուն Հայաստանեայց եկեղեցու ծիսով, նախապէս պահանջելով նորա իսկական մետրիքական վկայականը և մակագրել նորանում, որպէս և պատշաճ մետրիքական մատեանում կատարած մկրտութեան մասին։ 12 մայիսի, թ. 158։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած ապրիլի 28-ի թ. 732 մակագրութիւնը հանդուցեալ Անտոն վարդապետ Վարդազարեանի ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի օգտին կտակած 7300 ռ. արժէքներով և 411 ռ. 50 կ. կանխիկ դրամի գործադրութեան մասին՝ որոշեց. հանդուցեալ Անտոն վարդապետի մահից յետոյ ծնացած և դրամատուն ի շահեցողութեան տուած եօթն հազար երեք հարիւր տասն և մի ռուբլի 50 կոպ. պահելով Մ. Աթոռի գանձարանում իբրև աւանդ՝ հանդուցեալի կտակի քաղածը ուղարկել կտակակատար Տ. Գարեգին եպիսկոպոսին, յանձնարարելով հրաւիրել կտակակատար, հաստատել տալ կտակը ըստ օրինի և ապա սկսել իրագործել հանդուցեալի կամքը կտակի իմաստի համաձայն։ 12 մայիսի, թ. 159։

Սինոդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 7-ի թ. 254 յայտարարութիւնը, որով խնդրում է հրահանգ այն ընկեցիկ երեխաների վերաբերմամբ, որոնց որդեգրում են հայ բարեսիրտ ընտանիքներ, ում անունով և ինչպէս պիտի արձանագրին չափաբերական մատեանում հայ քահանաները՝ որոշեց. թէ համաձայն օր. X հատ. 1 մ. 163 յոդ. ժանօթ. (ըստ շարուն. 1906 թ.) մետրիքական մատեանում պէտք է արձանագրել ընկեցիկ երեխայի մկրտութիւնը այն ամուսինների անունով, որոնք օրինական կերպով որդեգրում են նորան։ 15 մայիսի, թ. 161։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 3-ի թ. 2171 յայտարարութիւնը Շարուր-Դարալագեազի գաւառի Գնեշեկ գիւղի բնակիչ Խորէն Յարութիւնեանին քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց թող

տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Թորէն Յարութիւնեանին և յանձնարարել փոխ—թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Գնեշեկ գիւղի համար։ 15 մայիսի, Թ. 162։

Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ մայիսի 5-ի Թ. 778 մակագրութիւնը Մ. Տաճարի ժամօրհնող Սահակ արքեպիսկոպոսի ռոճիկը ամսական քսան ռուբլով աւելացնելու մասին՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին տալ Մ. Տաճարի ժամօրհնող Սահակ արքեպիսկոպոսին յաւելեալ ռոճիկ տասն ռուբլու փոխարէն ամսական քսան ռուբլի, սկսած այս տարուայ մայիսի մէկից։ 15 մայիսի, Թ. 165։

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 10-ի Թ. 1159 յայտարարութիւնը Շուշի քաղաքի բնակիչ Աւագ Գրիգորեանցին Շուշու գաւառի Քարագլուխ գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. Թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աւագ Գրիգորեանին և յանձնարարել Թեմի կառավարչին ձեռնադրել նորան քահանայ Քարագլուխ գիւղի համար հրաժարած Իսրայէլ քահանայի տեղը։ 17 մայիսի, Թ. 177։

Սինօդը՝ լսելով Վանական կառավարութեան Նորին Սրբութեան անունով տուած մայիսի 5-ի Թ. 130 յայտարարութիւնը, որով ի նկատի ունենալով Մ. Աթոռի ագարակի անշահաւէտ արդիւնաբերութիւնը խնդրում է Նորին Սրբութեան բարեհաճ թոյլտուութիւնը հրապարակական աճուրդով վաճառելու Մ. Աթոռի ագարակի աւելորդ համարած լծկանները և կաթնատու անասունները, թողնելով միայն սայլերի և կաթնատուութեան համար որոշ թւով անասուններ, արձակելով բոլոր մշակներին պահել. մի քանի համապատասխան ծառաներ, իսկ վարելահողերը տալու կիսովի ցանելու համար՝ որոշեց. նկատի առնելով, որ Վանական կառավարութիւնը նորանոր վարկեր խնդրելով և ստանալով Սինօդից՝ Մ. Աթոռի հողերը սեպհական ըն-

տեսութեամբ մշակելու համար, միջնորդելով թողնել Ղօռուղների մէկը և վարելահողերը ու այգիները իւր տրամադրութեան տակ սեպհական մշակութեան համար՝ այժմ այդ բոլորի հակառակ, անշահաւէտ է համարում ունենալ սեպհական տնտեսութիւն, բայց և այնպէս յարգելով Կառավարութեան միջնորդութիւնը՝ թոյլ տալ կառավարութեանը աճրդով վաճառել այժմ աւելորդ ճանաչուող լծկանները և կաթնատու անասունները, և երկրորդ՝ որովհետև Սինոդի տնօրէնութիւնները Մ. Աթոռի ներքին տընտեսութեան վերաբերմամբ յաճախ տարակութիւններ են վեր առնում՝ խնդրել Վեհափառ Կաթողիկոսին ազատ համարել այսուհետև Սինոդին Վանքի և Վանական կառավարութեան գործերին միջամտելու պարտականութիւնից և, իբրև Մեծ Վանահայր, տնօրինել այդ գործերը Իւր անմիջական բարեհայեցողութեամբ։ 22 մայիսի, թ. 177։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթողիկոսի այս տարուայ մայիսի 12-ի թ. 821 մակագրութիւնը Մ. Աթոռի միաբան Կորիւն վարդապետ Սահակեանին միաբանական ռոճիկ և սննդագրամ տալու մասին՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին տալ Մ. Աթոռի միաբան Կորիւն վարդապետին միաբանական ռոճիկ և սննդագրամ, որպէս անպաշտօն վարդապետի սկսած այս տարուայ մայիսի մէկից։ 24 մայիսի, թ. 181։

Սինոդը՝ լսելով Զանգուի առուի Յանձնաժողովի նախագահ Տ. Մատթէոս եպիսկոպոսի այս տարուայ մայիսի 23-ի թ. 284 յայտարարութիւնը, որով Զանգուից հանած վանքապատկան առուի ծախքերը ծածկելու և գործը վերջնականապէս աւարտելու համար խնդրում է բանալու ես հինգ հազար ռուբլու վարկ՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին տալ Զանգուի առուի Յանձնաժողովի նախագահ Տ. Մատթէոս եպիսկոպոսին առուի աշխատանքների համար ես հինգ հազար ռուբլի, որի մասին յայտնել Զօրանքեարա, Ալիբէկլու և Վաղարշապատ գիւղերի ներկայացուցիչներին՝ պահանջելով ժամանակին նրանց բաժինը։ 24 մայիսի, թ. 182։

Մինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 17-ի թ. 1361 յայտարարութիւնը Ալէքսանդրապոլի գաւառի Զրախլի գիւղի վերաբնակչուհի քրդուհի—եզդի Փիրազատ Օսման ղղուն Հայաստանեայց եկեղեցու ծոցը ընդունելու մասին՝ որոշեց. մկրտել Զրախլի գիւղի վերաբնակչուհի եզդի Փիրազատ Օսման ղղուն Հայաստանեայց եկեղեցու ծիսով 26 մայիսի, թ. 186։

Մինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ մայիսի 16-ի թ. 853 մակագրութիւնը Նոր-Նախիջևանի ընակչուհի օրթոդոքս Իրինա Աքսէնովային Հայ եկեղեցու դաւանութեան ընդունելու մասին՝ որոշեց. պատուիրել Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիային ընդունել Հայ-Լուսաւորչական դաւանութեան Ն. Նախիջևանի ընակչուհի օրթոդոքս Իրենա Աքսենովային։ 26 մայիսի, թ. 187։

Մինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ մայիսի 20-ի թ. 885 մակագրական պատուէրը, որով առաջադրել է նշանակել Երուսաղէմի վանքի միաբան Ներսէս արեղային Մ. Աթոռի Տպարանի վարչութեան անդամ տալով յիշեալ արեղային ռոճիկ և անընդդրում առանց յաւելումների՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին վճարել տպարանական վարչութեան անդամ Ներսէս արեղային Մ. Աթոռի միաբանական ռոճիկ և անընդդրում ամսական վաթսուն ռ., սկսած այս տարուայ մայիսի 20-ից։ 31 մայիսի, թ. 188։

Մինօդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի այս տարուայ յունուարի 31-ի թ. 326 յայտարարութիւնը Պակի ս. Գէորգ վանքի հսկող Գրիգոր քահանայ Սարգսեանի ռոճիկը աւելացնելու մասին՝ որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային աւելացնել Պակի ս. Գէորգ վանքի հսկող Գրիգոր քահանայի ռոճիկը ամսական հինգ ռուբլով, սկսած այս տարուայ յունուարի մէկից։ 31 մայիսի, թ. 189։

Մինօդը՝ լսելով Տփխիսի 2-րդ կարգի վաճառական Իւանկվեգերելի Կոպաձէի 1916 թ. դեկտեմբերի 8-ի խնդիրը

Տփխիսում Արմենանկի–Բազարում Մ. Աթոռի ունեցած կալուածքը, որ բերում է տարեկան 420 ռ. վարձ, Ցումինեան և Սերեբրեաննի փողոցների անկիւնների վերայ իր ունեցած կալուածքի հետ փոխելու մասին, որը ունի աւելի մեծ տարածութիւն և բերում է աւելի վարձ՝ ՈՐՈՇԵՑ. ձեռնտու համարելով Իւան Կվեզերելի–Կոպաձէի առաջարկը՝ լիազօրել կալուածների կառավարիչ Լևոն Տէր Աւետիքեանին առանձին հաւատարմագրով փոխել Տփխիսի Արմենանկի բազարում Մ. Աթոռի ունեցած երկու խանութը, իւր հողով Կոպաձէին պատկանող Ցումինեան և Սերեբրեաննի փողոցների անկիւնների վերայ ունեցած կալուածի հետ, այդպիսով ամբողջացնելով Մ. Աթոռի կալուածը, ստանալ Կոպաձէից մի հազար ռուբլի, կատարել նոտարական բոլոր ձևականութիւնները, նախապէս հաւատարմացնելով և Կոպաձէից ստորագրութիւն ստանալով, որ նորա կալուածքի վերայ չէ հաշւում որ և է մասնաւոր, քաղաքային կամ պետական պարտք կամ ապառիկ հարկ, իսկ եթէ լինի՝ Կոպաձէն պարտաւոր է ինքը վճարել՝ վճարել միայն Մ. Աթոռի կալուածքը Կոպաձէի անունով հաստատելու ծախքը՝ և կատարածի մասին յայտնել ներկայացնելով կալուածագիրը և մի հազար ռուբլին, իսկ նոր կալուածքը սկսել շահագործել։ 31 մայիսի, Թ. 190։